ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2018 թվականի Հունիսի 3-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 6-րդ «Ա» դասարանի տարեվերջյան ծնողական ժողովը:

Ժողովին ներկա էին բոլոր ծնողները:

Ժողովը վարում էր դասղեկ Ան.Քոչարյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. II կիսամյակի և ուսման տարեկան առաջադիմությունը.

ա) ուսման առաջադիմությունը և ամփոփիչ արդյունքները,
բ) դասագրքերի վիճակը տարեվերջին,
գ) հաճախումների արդյունքները,ընդհանուր բացակայության արդյունքները:

2. Տարեվերջյան էքսկուրսիայի կազմակերպման հարցը

1. Լսեցին.- II կիսամյակի և ուսման տարեկան առաջադիմության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Ան. Քոչարյանը: Նա ամփոփ ներկայացրեց դասարանի բոլոր աշակերտների II կիսամյակի և տարեկան առաջադիմության արդյունքները: Նշեց, որ դասարանում ունեն 2 գերազանցիկ(1.Հակոբյան Միլենա,2.Մաթևոսյան Միլենա), և 7 հարվածային(1.Այվազյան Ռաֆիկ,2.Գրիգորյան Մելինե, 3.Գևորգյան Էմմա, 4.Խաչատրյան Նարե,5.Մխիթարյան Երիկա,6.Մուրադյան Նարե,7.Սարգսյան Էլիզա) աշակերտ: Ներկայացրեց նաև հաճախումների ամբողջ տարվա պատկերը՝ հորդորելով գալիք ուստարում նվազագույնի հասցնել բացակայությունների թիվը, բացակայել միայն խիստ անհրաժեշտության դեպքում:

Առաջարկվեց գալիք ուսումնական տարում ուժեղացնել այդ ուղղությամբ կատարվող բոլոր աշխատանքների հսկողությունը ծնողների և դասղեկի կողմից:

Դասղեկը նշեց, որ տարվա ընթացքում հետևողական է եղել օրագրերի գործածության, հերթապահության,հաճախումների, դասագրքերի և աշխատանքային տետրերի վիճակի ստուգման, համազգեստի, նրա պահպանման, ինչպես նաև դասարանի սանիտարական վիճակի ու գույքի պահպանման հարցում:

Դասղեկը նշեց, որ տարվա ընթացքում VI՝ դասարանը ներկայացրել է միջոցառումներ՝ նվիրված Ուսուցչի տոնին, «Հայրենիք, Հայաստան»,Պատանի մաթեմատիկոսներ թեմաներով, որոնց աշակերտները պատրաստվել և հանդես են եկել մեծ պատասխանատվությամբ՝ բարձր պահելով իրենց դասարանի հեղինակությունը:

Զեկուցողը նշեց նաև ուսման մեջ չառաջադիմող ու թերացող աշակերտների անունները, նրանց վարքի դրսևորման, հերթապահության կատարման, ավագների

աշխատանքի արդյունքները, տվեց դասարանի ծնողական և աշակերտական խորհուրդների աշխատանքի համառոտ ամփոփագիրը:
Դասղեկը նշեց, որ աշակերտները ստացել են ամառային արձակուրդների ընթացքում կատարվելիք առաջադրանքներ, հորդորեց ծնողներին լինել հետևողական, օգնել ձեռք բերել համապատասխան գեղարվեստական գրքերը:

Որոշեցին.- Լինել հետևողական, ամառային արձակուրդների ընթացքում վերահսկել երեխաների ժամանակը՝ հետևելով տնային ընթերցանությանն ու անցած նյութի կրկնողությանը:

Լսեցին.- 2. Տարեվերջյան էքսկուրսիայի կազմակերպման հարցը:

Խոսեց Ան. Քոչարյանը: Նա նշեց, որ շատ կարևոր է երեխաների հաճախակի այցելությունը մշակութային օջախներ՝ կրթական մակարդակը հարստացնելու և համակողմանի մարդ դաստիարակելու ընթացքը ճիշտ հիմքերի վրա դնելու համար:

Դասղեկը կարևորելով պատմական այն փաստը,որ Հայաստան աշխարհը տոնեց Սարդարապատի հերոսամարտի 100-ամյակը, առաջարկեց տարեվերջյան էքսկուրսիան կազմակերպել դեպի Սարդարապատի հուշահամալիր:

Որոշեցին՝

Տարեվերջյան էքսկուրսիան կազմակերպել դեպի Սարդարապատի հուշահամալիր, լինել թանգարանում, ծանոթանալ ազգային արժեքներին:
Ծնողների քննարկման և միասնական համաձայնության արդյունքում որոշեցին հավաքել որոշակի գումար տրանսպորտի և սննդի ապահովման համար: Այդ գործը հանձնարարել ծնողկոմիտեին:

Ժողովի նախագահ՝ ..... Մկրտչյան Ամալյա
Քարտուղար՝ ..... Լիլիթ Հովհաննիսյան